

Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի 2021թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի

10 -րդ դասարան

1. **Դաշտային հետազոտության** աշխատանքները կատարվում են **3 հիմնական փուլով`**
ա/ նախապատրաստական, բ/ բուն դաշտային և գ/ հետդաշտային (ավարտական):
Դաշտային հետազոտությունը կարելի է իրականացնել **3 եղանակով`**
ա/ անշարժ (ստացիոնար), բ/ կիսասանշարժ (կիսաստացիոնար) և գ/ երթուղային:
2. **Դաշնային պետությունները** ստեղծվում են 2 հիմնական հատկանիշի հիման վրա.
ա/ տարածքային հատկանիշի (օրինակ՝ Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա, Գերմանիա և այլն):
բ/ ազգային հատկանիշի (օրինակ՝ Հնդկաստան, Ռուսաստան, Նիգերիա և այլն):
3. **Ժամանակակից մարդն** առաջացել է մարդածին (անթրոպոգեն) ժամանակաշրջանում: Նրա ծագման և զարգացման գործընթացն ընդգրկում է 3 հիմնական ժամանակաշրջան.
ա/ նախնական (առաջին) ժամանակաշրջան – եղել է 2-3 մլն տարի առաջ, երբ գոյություն ունեին մարդու նախահայրերը: Նրանք որպես գործիք օգտագործում էին քարը, փայտը, ոսկորը:
բ/ երկրորդ ժամանակաշրջան - մարդը պատրաստում էր գործիքներ, օգտագործում կրակը, կառուցում պարզունակ կացարան:
գ/ երրորդ ժամանակաշրջան - նա ուներ ժամանակակից մարդու ֆիզիկական կառուցվածքը:
Բանական /մտածող/ մարդը ձևավորվեց մոտ 40-50 հազար տարի առաջ, երբ զարգացավ կոլեկտիվ համախմբվածությունը և լեզվով հաղորդակցվելը:
4. **Առանցքային զարգացող երկրներն** են Չինաստանը, Հնդկաստանը և Մեքսիկան:
Առանցքային զարգացող երկրներ են կոչվում այն պատճառով, որ տիրապետում են բնական, տնտեսական և մարդկային հսկայական ներուժի և շատ առումներով զարգացող երկրների մեջ առաջատար են: Սակայն ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով զգալիորեն փոքր է, քան զարգացած երկրներում:
5. **Խաղաղ օվկիանոսի** ազդեցությունը Հարավային Ամերիկայի վրա համեմատաբար փոքր է, քանի որ մայրցամաքի արևմտյան ափերով ձգվում են Անդերի բարձր լեռները (փոքրացնում են խոնավության և ջերմության մուտքը դեպի ցամաքի խորքը): Բացասական ազդեցություն ունի նաև արևմտյան ափերով անցնող Պերուական հզոր սառը հոսանքը:
Ատլանտյան օվկիանոսի դրական ազդեցությունը մեծ է, քանի որ մայրցամաքի արևելքն ու կենտրոնը համեմատաբար հարթ են, և խոնավ ու տաք օդն Ատլանտյան օվկիանոսից անարգել թափանցում է ցամաքի խորքերը: Արևելյան մասի վրա դրական ազդեցություն ունեն նաև տաք ու խոնավ պասսատները և մուսսոնները, ինչպես նաև Բրազիլական և Գվիանական ծովային տաք հոսանքները:
6. **1. Բարբել – անգլերեն՝ տակառ** – նավթի (հեղուկի) տարողություն և ծավալի չափ: 1 բարբելը հավասար է 159 լիտրի (ճիշտ համարել նաև 163,5 լիտրը): Կիրառվում է Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ – ում և այլ երկրներում:
2. Մելիորացիա – լատիներեն՝ բարելավում – հողերի անբարենպաստ պայմանները բարելավելու կազմակերպական, տնտեսական և տեխնոլոգիական միջոցառումների ամբողջություն: Հաճախ անվանում են նաև հողաբարելավում:
3. Աբրազիա – լատիներեն՝ ողողում, քայքայում – ջրային ավազանների ափերի քայքայում ջրի ալիքների հարվածների շնորհիվ:
4. Շխեր – շվեդերեն՝ ժայռ ծովում – ծովափերին բյուրեղային ապարներից կազմված և սառցադաշտերի հետևանքով մասնատված ժայռոտ ցածր ու փոքր կղզի:

7. **Մոբիլիզմի տեսությունը** 1912 թ. առաջարկել է գերմանացի երկրաֆիզիկոս Ա. Վեգեները: Նա առաջին անգամ տվեց երկրակեղևի սալերի տեղաշարժի բացատրությունը: Սկզբում տեսության կողմնակիցներ կային, սակայն հետո ժխտվեց: Վերջերս երկրաֆիզիկական ուսումնասիրություններով պարզվեց տեսության ճշմարտացիությունը: Պարզվեց, որ Ամերիկյան սալը բարձրանում է խաղաղօվկիանոսյան սալի վրա, իսկ վերջինս էլ մտնում է եվրասիական սալի տակ (ձևավորվում է խաղաղօվկիանոսյան հրե օղակը): Լայնանում է Ատլանտյան օվկիանոսի գոգավորությունը: Պարզվում է, որ Հյուսիսային Ամերիկյան Եվրոպայից տարեկան հեռանում է մոտ 5-6 սմ-ով, իսկ Հարավային Ամերիկյան Աֆրիկայից՝ մոտ 3-4 սմ -ով:

8. 1. **Հեռավորությունը հս. բևեռային շրջագծից կլինի՝**
 $66^{\circ} 30' - 45^{\circ} 30' = 21^{\circ}$, $21^{\circ} \times 111 \text{ կմ} = 2331 \text{ կմ}$
2. **Հեռավորությունը հարավային արևադարձից կլինի՝**
 $45^{\circ} 30' + 23^{\circ} 30' = 69^{\circ}$, $69^{\circ} \times 111 \text{ կմ} = 7659 \text{ կմ}$

9. **Միասնական գիտություններից են.**
1. երկրաբնապահպանությունը (գեոէկոլոգիան),
 2. ռեկրեացիոն աշխարհագրությունը,
 3. ռեսուրսագիտությունը,
 4. բժշկական աշխարհագրությունը,
 5. տարածաշրջանային (ռեգիոնալ) աշխարհագրությունը,
 6. պատմական աշխարհագրությունը,
 7. ռազմական աշխարհագրությունը:

10. Ցամաքային տիպի երկրակեղևում գրանիտային և բազալտային շերտերի միջև տարածվում է **Կոնրադի մակերևույթը** (Վ. Կոնրադի անունով), իսկ բազալտային շերտի և թույլլորտի (վերին մանթիայի) միջև՝ **Մոխտյի մակերևույթը** (Ա. Մոխտրովիչիչի անունով):

11. 1. Միգրացիայի մնացորդը (սալդոն)՝ $9800 - 16\,720 = - 6920$ մարդ:
2. Միգրացիայի ծավալը՝ $9800 + 16\,720 = 26\,520$ մարդ:
3. Միգրացիայի ինտենսիվության գործակիցը.

$Գ = \frac{\text{Ժ} + \text{Մ}}{\text{Բ}} \times 100 \%$, որտեղ $Գ$ – ինտենսիվության գործակիցն է, Ժ – ժամանողների թիվը,
 Մ – մեկնողների թիվը, Բ – բնակչության թիվը:

$$Գ = \frac{9800 + 16\,720}{3\,200\,000} \times 100 \% = 0,83$$